ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1481-Ա « 19 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի Հ.507-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿԻ 107.12ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի մարտի 12-ի հ.507-Ա որոշումը՝ Կենտրոն վարչական շրջանի, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով կազմակերպությանը տրամադրելու մասին:

Երևան քաղաքի ավագանին 2026 թվականի մարտի 12-ի հ.507-Ա որոշմամբ տվել է իրավունք Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 09.12.2021թ. հ.09122021-01-0408 վկայական), Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով, «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակեր-պությանը տրամադրելու մասին:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.463-Ն որոշման հավելվածով.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 107.12քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով, տրամադրել «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպությանը:
2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 2-րդ կետով նշված պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում.

2) պայմանագրի նոտարական վավերացման և դրանից բխող գույքային իրավունքի պետական գրանցման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանք ստանալու հետ կապված ծախսերը կատարվում են «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ